

## *Հավելված 1. Հետազոտության մեթոդաբանություն և գործիքներ*

Հետազոտության նպատակն է աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների գործունակության համակողմանի ըմբռնումը՝ առանձին դեպքի որակական ուսումնասիրության միջոցով: Դեպքը, մասնավորապես, 2019 ապրիլ-մայիսին Գյումրի քաղաքի «Մասստեքս» տեքստիլ գործարանի բանվորուհիների աշխատավարձերի անսպասելի նվազեցումն էր և դրա առնչությամբ աշխատողների բողոքի բարձրաձայնումն ու հանրային արձագանքը:

Այս նպատակով իրականացվել են հետևյալ հետազոտական քայլերը՝

- Քարտեզագրվել և երկրորդային ուսումնասիրության են ենթարկվել արհմիությունների մասին Հայաստանում նախկինում իրականացված հետազոտությունները;
- Քարտեզագրվել և ուսումնասիրության են ենթարկվել Հայաստանում առկա կամ գործող արհմիությունները, դրանց գործունեությանն առնչվող հանրայնորեն հասանելի փաստաթղթերն ու տեղեկատվությունը;
- Ուսումնասիրվել է արհմիությունների մասին ՀՀ օրենքը և արհմիությունների օրենքի մասին իրականացված հետազոտությունները;
- Իրականացվել է ոլորտի 7 փորձագետների և դեպքին ներգրավված կառույցների համապատասխան պատասխանատուների հետ հարցազրույցներ ինչպես արհմիությունների գործունեության ընդհանուր համատեքստի, այնպես էլ կոնկրետ դեպքի շուրջ (2019 հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին);
- Իրականացվել են գրավոր և բանավոր հարցումներ՝ դեպքին առնչվող փաստաթղթերի և մանրամասների ձեռքբերման նպատակով;
- Իրականացվել է դեպքին առնչվող մամուլի հրապարակումների (2019 մայիսի 27-ից մինչև 2019 դեկտեմբերի 15-ի բոլոր հասանելի հրապարակումները, որոշ հրապարակումներ նաև մինչև 2020 մարտի 20-ը) ուսումնասիրություն;
- Իրականացվել է դեպքի դերակատար 6 աշխատողների հետ իրենց իրավունքների պաշտպանության խնդիրների և արհմիությունների ունեցած դերակատարության շուրջ անհատական ֆոկուսավորված հարցազրույցներ (2019 հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին);
- Իրականացվել է աշխատողների աշխատանքային պայմանագրի իրավական վերլուծություն (տե՛ս Հավելված 4);
- Ուսումնասիրվել է արհմիությունների մասին ՀՀ օրենքում փոփոխությունների իրականացման նախաձեռնությունները՝ առկա միտումները բացահայտելու և դրանց շուրջ առաջարկություններ անելու նպատակով:

### **Դեպքի ընտրությունը:**

Դեպքի ընտրության հարցում նախնառաջ կարևորել ենք դրա ժամանակագրությունն այնպես, որ այն եղած լինի 2018թ Թավշյա հեղափոխությունից հետո: Հետևաբար մամուլի հրապարակումներից առաձնացվել են 2018թ Թավշյա հեղափոխությունից հետո աշխատանքային իրավունքների ոտնահարումների դեպքերը, որտեղ աշխատակիցները բարձրաձայնել են և լրատվական միջոցներով հանրայնացրել իրենց խղիրները, դիմել են պետական կամ հանրային համապատասխան մարմինների: Այսպիսով, որոշվել է դեպքի ընտրության հարցում կիրառել հետևյալ չափորոշիչները՝

- Դեպքը տեղի է ունեցել 2018-ի Թավշյա հեղափոխությունից հետո;

- Կա կոլլեկտիվ բողոք և կոլլեկտիվ պահանջ աշխատանքային իրավունքի ոտնահարումների հետ կապված;
- Դեպքն ունեցել է հանրային հնչեղություն, արձագանք;
- Տվյալ կոլլեկտիվն ունի արհմիություն (անկախ դրա մասին բողոքող աշխատակիցների իրազեկվածությունից);

Դեպքի ընտրության հարցում լրացուցիչ դերակատարում է ունեցել նաև բողոքի դուրս եկած աշխատողների գենդերային ասպեկտը՝ դիտարկելու համար, թե արդյոք այս գործոնը այս կամ այն կերպ դրսևորվում է աշխատանքային հարաբերություններում ծագած կոնֆլիկտի պայմաններում: Դեպքերը քննարկվել են հետազոտողների աշխատանքային խմբում, և հիմնվելով վերոնշյալ չափորոշիչների վրա՝ առանձնացվել է Գյումրիի «Սաստեքս» գործարանի աշխատակիցների բողոքի դեպքը, երբ 2019թ. մայիսի վերջին «Սաստեքս»-ի շուրջ հարյուր աշխատակիցներ բողոքի դուրս եկան այն բանից հետո, երբ 2019 ապրիլին ստացան սահմանված նվազագույն աշխատավարձից ցածր աշխատավարձ:

**Փորձագիտական հարցազրույցներ:** Հարցազրույցներն իրականացվել են հիմնականում հետազոտության սկզբնական փուլում, որոշ պետական հաստատությունների ներկայացուցիչների դեպքում լրացուցիչ ճշգրտող հարցումներն են արվել նաև դաշտային փուլի ավարտին: Փորձագիտական հարցազրույցների միջոցով ընտրված փորձագետների հետ քննարկվել է ընդհանուր աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակը Հայաստանում, իրավական, քաղաքականության և պրակտիկ մակարդակում ինստիտուցիոնալ կարողությունների, գործիքների առկայությունն և/կամ բացակայությունը աշխատանքային իրավունքների համապարփակ պաշտպանության համատեքստում, ինչպես նաև արհմիությունների ներկայիս և ցանկալի դերը, հնարավորությունները աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցում: 2019թ մայիսից սկսված Գյումրու «Սաստեքս» գործարանում աշխատակիցների բողոքի դեպքի հիման վրա փորձագետների հետ փորձ է կատարվել քարտեզագրել աշխատանքային իրավունքների պաշտպանության շուրջ կոնկրետ կառույցների իրականացրած գործառույթները և բացթողումները, այդ կառույցների ներկայիս և ցանկալի դերն ու կշիռը աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում: Փորձագետների ընտրության գործընթացում հաշվի են առնվել փորձագետի՝ աշխատանքային իրավունքի, աշխատանքային օրենսդրության, աշխատանքային այլ բնագավառում ունեցած փորձառությունը, թեմային առնչվող հրապարակումներն ու այդ բնագավառում ծավալած ներկա և նախկին գործունեությունը: Փորձագետների ընտրության հարցում կարևորվել է նաև նրանց գործունեության դերը և դիրքը այնպես, որ ներառված լինեն՝

- արհմիությունների ներկայացուցիչներ,
- աշխատանքային իրավունքների պաշտպանություն իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները,
- աշխատանքային ոլորտի ակտիվիստներ,
- օրենսդիր մարմնի ներկայացուցիչներ,
- հետազոտողներ:

**Անհատական ֆոկուսավորված հարցազրույցներ:** Ֆոկուսավորված հարցազրույցների նպատակն էր անմիջապես աշխատողներից ստանալ բողոքի իրենց փորձառության մասին մանրամասները՝ չնայած, որ դեպքը լայնորեն և հետևողականորեն լուսաբանվել էր մամուլի կողմից: Աշխատողների ընտրության համար չափանիշ ենք սահմանել՝

- Գյումրու «Մասստեքս» գործարանում նախկինում աշխատած լինելը,
- 2019թ մայիսին Գյումրու «Մասստեքս» գործարանում աշխատակիցների բողոքին մասնակցած լինելը,
- 2019թ մայիսին Գյումրու «Մասստեքս» գործարանում աշխատակիցների բողոքին մասնակից չլինելը:

**Փաստաթղթերի վերլուծություն:** Վերլուծության են ենթարկվել՝

- Արհմիությունների մասին ՀՀ օրենքը և արհմիությունների օրենքի շուրջ իրականացված հետազոտությունները;
- Հայաստանում արհմիությունների գործունեությանն առնչվող իրականացված հետազոտությունները;
- Արհմիությունների, աշխատանքային իրավունքներին և իրավահարաբերություններին առնչվող ՀՀ և միջազգային իրավական ակտեր և այլ փաստաթղթեր;
- Տարբեր կազմակերպությունների կողմից հրապարակված հաշվետվություններ, քաղաքականության թերթիկներ;
- Դեպքի մասին և դրան առնչվող մամուլի հրապարակումներ և այլն:

**Փորձագիտական հարցման ուղեցույց**

1. Գնահատել աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վիճակը Հայաստանում (ըստ ոլորտներ և ճյուղերի, ըստ պրակտիկայի),
2. Որո՞նք են այսօր ամենաշատ ոտնահարվող աշխատանքային իրավունքները, ո՞ր խմբերի շրջանակներում են դրանք ամենախնդրահարույցը:
3. Արդյո՞ք իրավական մակարդակում կան համապատասխան գործիքներ՝ խնդիրները հասցեագրելու համար:
4. Իսկ կա՞ն ինստիտուցիոնալ կառույցներ և կարողություններ՝ խնդիրները հասցեագրելու համար:
5. Եթե փորձենք քարտեզագրել աշխատանքային իրավունքներով ո՞ր կառույցները ի՞նչ գործիքներով են աշխատում (արհմիություններ, ՀԿ-ներ, աշխատանքային տեսչություն, ԱԺ և այլն): Գնահատել դրանցից յուրաքանչյուրի ներկայիս/ցանկալի դերն ու կշիռը աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում:
6. Արդյո՞ք այսօր Արհմիությունների մասին օրենքը բավարար է արհմիությունների անկախ և արդյունավետ գործունեության համար:
7. Արհմիությունների մասին օրենքի բարեփոխման ի՞նչ գործընթացներ, ի՞նչ հնարավորություններ ու ի՞նչ խոչընդոտներ կան ներկայումս:
8. Արհմիությունների գորեղացման համար ի՞նչ խոչընդոտներ կան ներկայումս (քաղաքական, բիզնես, սոցիալ-տնտեսական և մշակութային, գնահատել դրանց կշիռը):
9. Կարո՞ղ եք նշել վերջին երեք տարում արհմիությունների կողմից աշխատողների իրավունքների պաշտպանության դրական և բացասական փորձառության դեպքեր նշել:
10. Ինչպե՞ս կբնութագրեք Գյումրու «Մասստեքսի» աշխատողների բարձրացրած բողոքի դեպքը:

11. Գյումրու «Մասստեքսի» աշխատողների բարձրացրած բողոքի առնչությամբ ովքեր (արհմիություններ, ՀԿ-ներ, աշխատանքային տեսչություն, ԱԾ և այլն), ինչպե՞ս պետք է հասցեագրեին խնդիրները:

### **Անհատական ֆոնուսավորված հարցազրույցի ուղեցույց**

1. Ի՞նչ է տեղի ունեցել մայիս-հունիս ամիսներին Գյումրու «Մասստեքս» տեքստիլի ֆաբրիկայում: Իսկ ներկայումս ի՞նչ իրադրություն է (սահմանել իրադրությունը):
2. Ովքե՞ր էին հիմնական մասնակիցները, ո՞րն էր նրանց պահանջը, ումի՞ց էր նրանց պահանջը: Ո՞րն է եղել ձեր մասնակցությունը:
3. Ու՞մ էք դիմել օգնության համար, ի՞նչպիսի օգնություն էք ակնկալել:
4. Ո՞ր կառույցներից էին ներգրավված, ի՞նչ էին ցանկանում անել, ի՞նչ քայլեր են իրականացվել և ինչ արդյունքներ են գրանցվել: Ի՞նչ քայլեր պետք է կամ կարող էին իրականացվել, որ դեռ չեն արվել կամ չարվեցին:
5. Արդյո՞ք դուք արհմիության անդամ էք, ինչպե՞ս էք դարձել արհմիության անդամ, կամ եթե արհմիության անդամ չեք, ինչու՞ արհմիության անդամ չեք:
6. Արդյո՞ք (ձեր) արհմիության ներկայացուցիչները հանդիպել են ձեզ հետ, լսե՞լ են ձեր պահանջը, ինչպե՞ս են ներգրավվել, քննարկե՞լ էք իրար հետ ինչ-որ հարցեր, ի՞նչ հարցեր էք քննարկել:
7. Ինչպիսի՞ հանգուցալուծում է ստացել խնդիրը հիմա, իսկ ինչպիսի՞ն պետք է լինի իդեալական լուծումը ձեր պատկերացմամբ, որ կառույցներից ովքեր ի՞նչ պետք է անեին կամ չանեին:
8. Ի՞նչ է պետք անել, ի՞նչ նախապայմաններ պետք է ունենալ, որպեսզի հետագայում կարողանանք խուսափել ձեր նկարագրած խնդրից: